ԳԱՌՆԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Վերջին խորեզմշահ Ջալալ ադ-Դինի (1220—1231) արշավանքներն Անդրկովկաս՝ մոնղոլական արհավիրքներին անմիջապես նախորդող ամենակարևոր իրադարձություններն են XIII դ. երկրորդ տասնամյակի Հայաստանի և Վրաստանի պատմության մեջ։ Խորեզմյան զորաբանակի յոթնամյա ռազմական գործողությունները տնտեսական, քաղաքական և ռազմական տեսակետներից զգալիորեն թուլացրին Անդրկովկասը, որոշ չափով ազդեցին նաև սոցիալական պրոցեսների ընթացքի վրա ու ծանր հետևանքներ ունեցան անդրկովկասյան ժողովուրդների համար։

Հայաստանում և Վրաստանում Ջալալ ադ-Դինի հետագա ձեռնարկումների համար բախտորոշ նշանակություն ունեցավ Գառնիի ճակատամարտը՝ մեծ չափով պայմանավորելով խորեզմշահի ապագա հաջողությունները։ Չնայած Ջալալ ադ-Դինի արշավանքների պատմությանը հատկացված ուշադրությանը, այդ կարևորագույն իրադարձությունն առայժմ չի արժանացել հատուկ քննության։ Մասնագիտական գրականության մեջ այսօր էլ տարբեր, երբեմն հակասական տեսակետներ են հայտնվում ճակատամարտի ճշգրիտ ժամանակի, ընթացքի, մասնակից կողմերի ուժերի հարաբերության, հայ-վրացական բանակի պարտության պատճառների, հետևանքների և այլ հարցերի վերաբերյալ, ուստի այդ խնդիրների վերստին արծարծումը կարևոր է։

Մոնղոլների կողմից իր հայրենիքից հալածված խորեզմշահը Հայաստան ներխուժեց 1225 թ., Ատրպատականից[1], «գերելու և ավերելու Դվինն ու շրջակա երկրները»[2]։ Նորահայտ թշնամու դեմ ճակատամարտելու համար Ռուսուդան թագուհին (1223—1245) ուղարկեց աթաբեկ և ամիրսպասալար Իվանե Զաքարյանին, որը, «ժողովեալ... զամենայն զոյժ և զօրութիւն Հայոց և Վրաց»[3], վճռական մարտի ելավ Կոտայք գավառում, Գառնի գյուղաքաղաքի մոտ։ Հայ-վրացական բանակի հաղթանակը կնշանակեր պարտության մատնել և արտաքսել թշնամուն, իսկ Ջալալ ադ-Դինի հաջողությունը նրան թույլ կտար շարժվել ուղղակի Թբիլիսիի վրա։

Սկզբնաղբյուրները բավական տվյալներ են ընձեռում՝ պարզելու հակառակորդ զորաբանակների թվաքանակը։ Ըստ Իբն ալ-Ասիրի, հայ-վրացական

---

1 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 143, «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 399։

2 «Վրաց ժամանակագրություն», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 59։

3 Ստեփանոս Օրբելյան, էջ 399։

զորքերի թիվը հասնում էր 70 հազարի[4]*, սակայն ավելի ստույգ կարելի է համարել Ջալալ ադ-Դինի կենսագիր ան-Նասավիի և Ս. Օրբելյանի համահունչ վկայությունները*[5] *և այդ թիվը ճշգրտել 60 հազարով*[6]*։ Այսպիսով, հայ-վրացական զորքերի թվաքանակի հարցում աղբյուրները գրեթե նույնահաղորդ են, ինչը չի կարելի ասել խորեզմշահի բանակի վերաբերյալ։ Վրաց ժամանակագիրը խորեզմցիների զորքերի քանակը հաշվում է 140 հազար, իսկ Վարդան Արևելցին այդ թիվը հասցնում է 200 հազարի*[7]*։ Այս խիստ չափազանցված թվերին հակառակ, Ռաշիդ ադ-Դինը խորեզմցիների բանակի մեծությունը սահմանափակում է 30 հազարով*[8]*, բավական դժվար խնդրի առաջ կանգնեցնելով հետազոտողներին։ Հարցի պարզաբանմանը, թվում է, կարող են նպաստել իրադարձություններին ժամանակակից հեղինակ ալ-Բաղդադիի վկայությունները, որոնք նա քաղել է վեց տարի Թբիլիսիում ապրած մի բժշկից։ Վերջինիս կարծիքով, խորեզմցիների թվաքանակը չի հասել 100 հազարի, այլ եղել է թերևս 60 հազար*[9]*։ Եթե նկատի առնենք ան-Նասավիի հաղորդումն այն մասին, որ մինչև Գառնիի ճակատամարտը Ջալալ-ադ-Դինի զորքերի մեծ մասը մեկնել էր այլևայլ երկրամասեր, ապա հասկանալի կդառնա հայ-վրացական բանակի քանակական գերկշռության մասին խորեզմշահի կենսագրի հավաստիացումը*[10]*։ Այդ գերակշռությունը, այնուամենայնիվ,*

---

[4] «Материалы по истории Азербайджана из Тарих ал-Камиль (Полного свода истории) Ибн ал-Асира», перевод П. Жузе, Баку, 1940, с. 156 (*այսուհետև՝* Ибн ал-Асир).

[5] Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, перевод с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З. М. Буниятова, Баку, 1973, с. 156 (*այսուհետև՝* ан-Насави), *«Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հ. 1, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 39։*

[6] *Ջ. Ա. Բոյլը* („The Cambridge History of Iran", vol. 5, Cambridge, 1968, *էջ 327), հետևելով Իբն ալ-Ասիրին, հայ վրացական զորքերի թիվը հաշվում է 70 հազար։ Սխալվում է Զ. Բունիաթովը՝ գրելով, թե Իբն ալ-Ասիրը ևս վկայում է 60 հազարի օգտին* (ан-Насави, с. 361, прим. 1).

[7] *«Վրաց ժամանակագրություն», էջ 59, Վարդան, էջ 143։*

[8] Рашид ад-Дин, Сборник летописей, т. I, кн. вторая, М.—Л., 1952, с. 242. *Պարսիկ պատմիչ Ջուվեյնին* (რ. კიკნაძე, ჯუვეინის ცნობები საქართველოს შესახებ, თბ., 1974, გვ. 29), *ընդհակառակը, ավելի քան 30 հազար է հաշվում հայ-վրացական զորքերի թիվը։ Այսպիսով, Ջուվեյնիի և Ռաշիդ ադ-Դինի տեղեկությունները հակասում են իրար, քանի որ նրանցից որևէ մեկը, ինչպես երևում է, սխալմամբ հակառակորդ կողմին է վերագրել 30 հազար թվաքանակը։ Թեև Ջուվեյնին ժամանակով նախորդում է Ռաշիդ ադ-Դինին և թվում է թե սխալը պետք է թույլ տար առաջինի ասածները հաճախ կրկնող Ռաշիդ ադ-Դինը, որոշ նկատառումներ մտածել են տալիս թյուրիմացություն ակնկալել Ջուվեյնիի երկում։ Երկու հեղինակն էլ չափազանցված են ներկայացնում իրենց հավատակից Ջալալ ադ-Դինի հաջողությունները* (И. П. Петрушевский, Вазир Шараф ал-Мульк, «Ближний и Средний Восток», М., 1962, с. 34) *և դժվար է կարծել, որ նրանք իրականից երկու անգամ փոքր նշեին խորեզմշահի հակառակորդ բանակի թվաքանակը։ Ուստի պետք է կարծել, որ ավելի ճիշտ է Ռաշիդ ադ-Դինի վկայությունը, ըստ խորեզմշահի զորքերի թիվը, ինչպես և սպասելի էր, նկատելիորեն սակավացված է։*

[9] C. Cahen, 'Abdallaṭīf al Baghdādī et les Khwārizmiens („Iran and Islam, in memory of the late Vladimir Minorsky", Edinburgh University Press, 1971, p. 159).

[10] Ан-Насави, с. 157.

թվում է, այնքան էլ բացահայտ չի եղել, ինչպես փորձում են ներկայացնել ան-Նասավին և Ռաշիդ ադ-Դինը։ Պետք է անպայման հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ջալալ ադ-Դինի բանակին, «անհավատների» դեմ ելնելու նրա կոչերի ազդեցությամբ, հաճախ ուղեկցում էին նաև որոշ տեղական մահմեդական իշխանավորների ու զանազան քոչվոր թուրքմենական ցեղերից կազմված զորաջոկատներ[11]։

Սկզբնաղբյուրները բավական համերաշխ են ներկայացնում ճակատամարտից առաջ երկու կողմերի զորքերի նախնական դասավորությունը, կռվի ընթացքն ու ելքը։ Հայ-վրացական զորքերի՝ Գառնիի մոտ, բարձունքի վրա տեղակարգվելու մասին ան-Նասավիի վկայությունը[12] հաստատում և լրացնում են Կիրակոս Գանձակեցին («Իւանէ... կայր հանդէպ նոցա ի վերոյ»)[13] և Միխայել Ասորու ժամանակագրության հայ շարունակողը («Իշաւ (Իվանեն—Հ. Մ.) ի լեառն Գառնոյ, որ կոչի Աղուշերմն»)[14]։ Իվանեի բանակի այս գերադասելի դիրքը, որ հնարավորություն էր ընձեռում հարձակման համար, հայ-վրացական զորքերը չօգտագործեցին։ Կիրակոս Գանձակեցին նույնիսկ Իվանեին մեղադրում է երկչոտության մեջ՝ «տեսեալ զնոսա (խորեզմցիներին—Հ. Մ.) զանգիտեաց, զետեղեալ ի տեղւոջն»[15]։ Նկատելով դա, Ջալալ ադ-Դինը որոշեց նախահարձակ լինել. խորեզմշահի հետ միասին գրոհի նետվեց նրա բանակի ձախ թևը, որտեղ դասավորվել էին նետաձիգները՝ հակառակորդին հեռվից հարվածելու համար[16]։ Իվանե աթաբեկը խորեզմցիների հարձակմանը դիմագրավելու համար ուղարկեց առաջապահ ջոկատը՝ Շալվա և Իվանե Ախալցիխեցի իշխանների գլխավորությամբ։ Ինչպես պատմում է Վրաց ժամանակագիրը, «Երբ մերձեցան [վրաց] նախահարձակներն ու սուլթանը, այն ժամանակ Իվանե աթաբեկը ոտը կախ գցեց։ Ասում են, թե թշնամություն կար [նրա] և ախալցիխեցի Շալվայի ու Իվանեի միջև... Վրաստանի հիմնովին ավերմանը դրդեց, ինչպես ասորև կերևա, երբ Իվանե աթաբեկը մարտի ժամին ետ կանգնեց և այլևս չէր գնում դեպի մարտնչողները։ Մինչև բոլոր նախահարձակները մարդ ուղարկեցին [Իվանե աթաբեկի] մոտ և ասացին. «[ընդհուպ] մոտեցել ենք սուլթանին ու նրա բանակին, մենք խիստ սակավաթիվ ենք, և ծանր մարտ է մեզ սպասում։ Ուղարկիր մեզ [օգնության] թագավորական քաջ զորքերն ու քաջությունը քո»։ Այսպես երկու-երեք անգամ [մարդ] ուղարկվեցին, սակայն նա ոչինչ չէր պատասխանում... Իվանե աթաբեկն ու վրացական զորքը տեսնում էին ուժգին մարտը և չէին խղճում ազգակիցներին ու հավատակիցներին՝ Քրիստոս խոստովանող թորեցիներին ու նրանց հետ՝ բազում անվանիների, այլ կանգնել էին հեռվում, և Իվանե

---

11 Խորեզմցիների բանակի խայտաբղետ կազմի մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին. «Եւ կուտեաց (խորեզմշահը—Հ. Մ.) զօրս անթիւ ի պարսից, և ի տաճկաց, և ի թուրքաց...» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 224)։ Ջալալ ադ-Դինի և թուրքմենական ցեղերի ու տեղի տիրողների համագործակցության մասին այլևայլ առիթներով խոսում է նաև ան-Նասավին (ан-Насави, с. 149, 160—161, 279—280)։

12 ан-Насави, с. 158.

13 Կիրակոս Գանձակեցի, էջ 224—225։

14 Միխայել Ասորի, ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 527։

15 Կիրակոս Գանձակեցի, էջ 225։

16 ан-Насави, с. 157—158.

աթաբեկը չէր կամենում օգնել, որի արարքի պատճառը թշնամանքն էր, այլ ոչ թե վախը»[17]: Իվանեի և Շալվայի ջանքերը նման պարագաներում զուր անցան. «Շալվան հենց տեղում գերվեց հույժ մեծ բազմության կողմից, իսկ Գառնիի սարերի ծերպերին ապաստանած Իվանեն վերևից գցված քարով սպանվեց»[18]։ Ճակատամարտի վախճանը պատկերավոր է նկարագրում Կիրակոս Գանձակեցին. «Իսկ զօրն վրաց այնմ ուշ ոչ եդին, այլ փախեան ի տեղւոջէ անտի, մինչև այր զընկեր ի փախուստ ո՛չ գիտէր։ Եւ երթեալք առանց ուրուք հալածելոյ ամենեքեան ի վախից ի վայր մղեալք՝ ի ձոր անդր լնուին ի գլուխս քաղաքագեղն Գառնւոյ։ Եւ իբրև տեսին զայն զօրքն սուլտանին, զհետ մտեալ՝ զբազումս կոտորեցին և զայլս գահավէժ արարին»[19]։ Ինքը՝ Իվանե աթաբեկը, հազիվ հազ կարողացավ փախչել և ապաստանել Գեղի (Քեղի) ամրոցում[20], որտեղից էլ վերադարձավ Բջնի[21]։

Գառնիի ճակատամարտում Ջալալ ադ-Դինի հաղթանակը սովորական չէր այն առումով, որ ձեռք բերվեց ոչ միայն և ոչ այնքան նրա զորքերի խիզախության շնորհիվ (ավելին՝ խորեզմշահը գժգոհ էր մնացել իր բանակի աջ թևի գործողություններից)[22], այլ հակառակորդ բանակի զարմանալի թույլ դիմադրության հետևանքով[23]։ Այս հանգամանքը հայ-վրացական զորքերի պարտության պատճառների հանգամանալից պարզաբանմանն առավել մեծ կարևորություն է հաղորդում[24]։

Քննվող խնդիրը լուսաբանող սկզբնաղբյուրներից ամենաուշագրավ վկայությունները պատկանում են Վրաց ժամանակագրին, որը Գառնիում հայ-վրացական զորքերի պարտության հիմնական պատճառը համարում է միջ-

---

17 «Վրաց ժամանակագրություն», էջ 60 (այս և հետագա ընդգծումները մերն են—Հ. Մ.)։

18 Նույն տեղում, էջ 61։

19 Կիրակոս Գանձակեցի, էջ 225, հմմտ. Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 66։

20 Ստեփանոս Օրբելյան, էջ 399, «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 39։ Ամրոցի անունը հետազոտողները երբեմն հիշատակում են «Գեղեւ» (Քեղև) ձևով (Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 199, Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, էջ 185, ივ. ჯავახიშვილი, ქართველი ერის ისტორია, III, თბ., 1966, გვ. 54, ծան. 2), այսպիսով ուղղական ընկալելով սեռական հոլովաձևը և առանց նկատի ունենալու «իւ»-ով վերջացող հատուկ անունների հոլովական առանձնահատկությունը (Ս. Ավագյան, Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում («Մաշտոցյան Մատենադարանի հարցերը», Երևան, 1968, էջ 129)։ Ամրոցի պատմության և տեղադրության շուրջ տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 33, Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 372—375։

21 «Վրաց ժամանակագրություն», էջ 61։ Զ. Բունիաթովին թվացել է, թե Իվանեն Գառնիից անմիջապես փախել է Բջնի (ан-Насави, с. 363, прим. 6), քանի որ պատմիչը նշում է Իվանեի վերադառնալը. «Իվանե աթաբեկը վերադարձավ Բջնի, սուլթանը՝ Ատրպատական և Նախիջևան» («Վրաց ժամանակագրություն», էջ 61)։

23 ан-Насави, с. 160.

23 Աղբյուրները չեն հաստատում այն կարծիքը, թե «Գառնիի ճակատամարտը չափազանց համառ բնույթ է կրել» (Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 185)։

24 Անընդունելի է այն բացատրությունը, որ առաջարկում է Գ. Հովսեփյանը. ըստ նրա, «հայ-վրացական զորքերը «չարաչար պարտություն կրեցին իրենց անփութության շնորհիվ» (Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 45)։

ավատատիրական հակասություններն ու պայքարը։ Պատմիչի այդ տեղեկությունները քննության է առել ակադ. Ի. Ջավախիշվիլին և այլ կերպ մեկնաբանել Գառնիի ճակատամարտում Իվանե աթաբեկի վարքագիծը։ Գիտնականն անհավանական է համարում աթաբեկի գործողությունների նպատակադիր լինելը, քանի որ պարտության դեպքում հենց Իվանեն էր պատասխանատվություն կրելու։ Պատմիչի «ասում են» արտահայտության վրա հենվելով, ուսումնասիրողը կարծում է, որ XIV դարում ապրած մատենագիրն օգտվել է հետագայում հորինված լուրերից։ Ի. Ջավախիշվիլին առավել հավանական է համարում այն, որ Իվանեն չի կարողացել ճիշտ կողմնորոշվել վճռական պահին և այդ պատճառով էլ անհրաժեշտ ժամանակ կռվի չի նետել իր հիմնական ուժերը[25]։

Նախ՝ Իվանեի արարքի ոչ պատահական լինելու մասին։ Վրաց պատմիչը իբրև փաստ է արձանագրում և ոչ թե ենթադրություն անում, որ Իվանեն դիտմամբ չէր ցանկանում օգնել իր առաջապահ ջոկատին։ Հեղինակի «ասում են» արտահայտությունը վերաբերում է սոսկ այն հարցին, թե ինչու էր այդպես վարվում աթաբեկը, ամենևին իսկ կասկածի տակ չառնելով բուն իրողությունը[26]։ Աթաբեկի ռազմական սխալի մասին կարելի կլիներ խոսել, եթե նա շուտ կամ ուշ մարտի մեջ մտներ, սակայն նա գերադասել է ընդհանրապես կռվին չմասնակցել։ Չէ՞ որ Իվանեի համար միանգամայն պարզ պետք է լիներ, որ Ախալցիխեցի եղբայրների ջոկատը, որը, ըստ ալ-Բաղդադիի արժեքավոր վկայության, բաղկացած էր ընդամենը 7 հազար մարտիկից[27], ի վիճակի չի լինելու երկար ժամանակ դիմադրել բացահայտորեն գերակշիռ ուժեր ունեցող թշնամուն։

Պետք չէ մոռացության տալ ևս մեկ կարևոր հանգամանք. Իվանեն կարող էր և այդ պահին դեռևս չզգալ իր քայլի ճակատագրական լինելը, քանի որ, ինչպես ցույց է տվել Ի. Ջավախիշվիլին, վրաց արքունիքում այն մտայնությունն էր տիրում, թե իրենք են հաղթել մոնղոլներին 1220—1221 թթ.,

---

25 ივ. ჯავახიშვილი, նշվ. աշխ., էջ 52—53։ Ինչպես երևում է, այս հարցում Ի. Ջավախիշվիլու իրական կարծիքին անհաղորդ է մնացել Ջ. Բունիաթովը, որն անհիմն հայտարարում է, թե ականավոր պատմաբանն ընդունում է Գառնիի ճակատամարտի պարտության պատճառների վերաբերյալ Վրաց ժամանակագրի բացատրությունը (ан-Насави, с. 363)։ Վրացագիտական նորագույն գրականությունում Ջուվեյնիի տեղեկությունների հիման վրա Գառնիում պարտության հնարավոր պատճառ է ենթադրվում խորեզմցիների հանկարծակի գրոհը, սակայն, մյուս աղբյուրների ավելի մանրամասն նկարագրությունները, ինչպես տեսանք, ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայ-վրացական բանակի զորահրամանատարի համար Ջալալ ադ-Դինի գործողություններն անակնկալ չեն եղել։ Նշենք նաև, որ առաջապահ ջոկատին օգնության հասնելու խնդիրը Գառնիում այնքան ակներև է եղել, որ Իվանեի տարեց լինելու պարագայում անգամ փորձառու զորավարի համար այդ լիովին հասկանալի պետք է լիներ։ «Վրաստանի պատմության ակնարկներում» Գառնիի պարտությունը նաև մասամբ Իվանեի ծեր լինելու հանգամանքով է բացատրվում („საქართველოს ისტორიის ნარკვევები“ ტ. III, თბ., 1979, გვ. 540)։

26 Գառնիի ճակատամարտի մասին Վրաց ժամանակագրի պատմածին կարելի է հավատ ընծայել, քանի որ նա 1226 թ. մարտին Թբիլիսիի գրավման դեպքերը շարադրելիս օգտվում է «ոմն մղվիմեցի աբեղայից» («Վրաց ժամանակագրություն», էջ 66), հետևաբար, հնարավոր է՝ նախորդ իրադարձությունները ավանդելիս ևս ստուգապատում աղբյուր է ունեցել ձեռքի տակ։

27 C. Cahen, նշվ. աշխ., էջ 159։

և մոնղոլներից պարտություն կրած Ջալալ ադ-Դինը վտանգավոր հակառակորդ չէ իրենց համար[28]։

Որ Իվանեի գործողությունները պատահական չեն դիտվել և դատապարտվել են ժամանակակիցների ու Ռուսուդան թագուհու կողմից, պարզորոշ երևում է Վրաց ժամանակագրի այն վկայություններից, որոնք վերաբերում են Ջալալ ադ-Դինի դեմ տրված երկրորդ մեծ մարտին՝ Մինդորիի ճակատամարտին։ Ըստ պատմիչի, թագուհին այդ անգամ մարտի գնացող զորքերի հետ չի ուղարկել արքայական դրոշը՝ «Իվանեի աթաբեկի կատարածի պատճառով»[29]։

Քննենք նաև այն հարցը, թե աթաբեկի համար իրո՞ք այդքան ազդու հանգամանք էր թագուհու առաջ պատասխան տալու հարկադրանքը։ Վերհիշենք թեկուզև XII դ. երկրորդ կեսի պատմությունը, երբ Դագի, Դարգառի ճակատամարտերի և 1174 թ. Անիի դեպքերի ժամանակ մեծատոհմիկ ավատատերերը և, առաջին հերթին, ամիրսպասալար Իվանե Օրբելին, բնավ իսկ չերկնչելով համեմատաբար ավելի մեծ փաստական իշխանություն ունեցող, վճռական ու հաստատակամ Գեորգի Գ-ից (1155/56—1184), չէին վախենում անգամ թշնամու հետ համագործակցելուց[30]։ Պետք է անպայման նկատի ունենալ նաև այն անժխտելի հանգամանքը, որ Թամար թագուհու (1184—1207/1210) գահակալության վերջին տարիներին սկսված թագավորական իշխանության թուլացումը Գեորգի-Լաշայի (1207/1210—1223) և Ռուսուդանի ժամանակ առավել մեծ չափով էր իրեն զգացնել տալիս, որը և չէր կարող դուռ չբացել մեծատոհմիկ ազնվականության ներսում նոր բախումների ու պայքարի համար։ Թամար թագուհու մահվանը հաջորդած ներդասակարգային խլրտումների մասին պատմում է նույնիսկ Իբն ալ-Ասիրը[31], իսկ հայկական աղբյուրները հիշատակում են միջավատատիրական պայքարի մի բնորոշ դրվագ՝ մոնղոլական առաջին արշավանքն ավանդելիս[32]։ Ուստի Իվանեի ու Շալվա և Իվանե Ախալցիխեցիների միջև «թշնամությունն» ամենևին էլ անհավանական չէ, մանավանդ երբ փորձում ենք բացահայտել այդ հակառակության հիմքերը։ Ակադ. Ն. Բերձենիշվիլու ուշագրավ կռահմամբ, երկպառակությունն արդյունք կարող էր լինել այն պայքարի, որ մղում էին երկու Իվանեներն աթաբեկության պաշտոնի շուրջ[33], սկսած XIII դ. սկզբից։ Հիշենք, որ Կարսի գրավումից հետո Թամար թագուհին հենց Իվանե Ախալցիխեցուն էր շնորհել Կարսի ամիրայից ամիրայի տիտղոսը և Լաշա-Գեորգիի խնամակալությունը՝ աթաբեկությունը[34]։ Թեև այդ կարևորագույն պաշտոնի շուրջ

---

28 Ս. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 48—49։

29 «Վրաց ժամանակագրություն», էջ 70։

30 Հ. Մարգարյան, Հայոսիայի Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 109—121։

31 Ибн ал-Асир, с. 131.

32 Մոնղոլների դեմ կռվի թեժ պահին Մանասագոմ բերդի տեր Համիդլան կտրել էր Իվանե աթաբեկի ձիու ոտքի ջիլերը («Մաղաքիա աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նեստորաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 5, հմմտ. Վարդան, էջ 142)։

33 Ն. Ծուրժենիշվիլի, Սաքարթվելոս սեփտորոսն Սաքոտնեցիս, Ք. IX, տպ., 1979, գլ. 184, 202:

34 Քարտլիսն ցխովրեցա, Ք. II, տպ., 1959, գլ. 59. Լ. Մելիք-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 20։

մղված պայքարը լուսաբանող տվյալները կցկտուր են, անկասկած է, որ աթաբեկության հանձնումը Իվանե Զաքարյանին՝ բոլորովին էլ այնպես խաղաղ ու կամավոր չի կատարվել, ինչպես որ ցանկանում է ներկայացնել Թամար թագուհու առաջին պատմիչը։ Նրա պատմածն ավելի շուտ կասկածել է տալիս, որ Իվանեն ինքն է թագուհուն հարկադրել իրեն հանձնել աթաբեկության պաշտոնը, այդպիսով այն խլելով, թերևս, Իվանե Ախալցիխեցուց։ Իվանե Զաքարյանի և Ախալցիխեցիների միջև պայքարը, ընդ որում դարձյալ ի վնաս վերջիններիս, շարունակվում էր, հավանաբար, նաև հետագայում։ Թվում է, այդ բախումների արդյունքը նկատի ունի Վրաց ժամանակագիրը, երբ պատմում է Քոսե-դաղի (Զմանկատուկի) 1243 թ. նշանավոր ճակատամարտին Իկոնիայի սուլթանի կողմից մասնակցող վրաց իշխանների մասին. «Զորապետներ նշանակեց (Ղիաս ադ-Դին սուլթանը—Հ. Մ.) Շարվաջիս-ձե Ափխազին՝ Դարդին անվամբ... նրա հետ՝ Ախալցիխելի-Թորելի Շալվայի որդի Փարադավլային, որը փախստական գնացել էր սուլթանի մոտ և քաջ ու մարտերում անվանի մարդ էր»[35]։ Երկու տոհմերի միջև թշնամությունը կարող էր հանդարտվել XIII դ. 40-ական թվականների կեսերից, երբ Զաքարյանների գերակշռությունն ակնհայտ էր, և Իվանե Ախալցիխեցու որդի Դավիթը ծառայում էր Ավագ Զաքարյանի մոտ՝ իբրև հեջիբ[36]։

Հայ-վրացական զորքերի միասնությանն ու համերաշխությանը զգալի հարված էր հասցնում նաև դավանական հարցերում Իվանե աթաբեկի դիրքորոշումը։ Գրեթե բոլոր հայկական աղբյուրները Գառնիի պարտությունը բացատրում են իբրև նախախնամության պատիժ՝ ի պատասխան նրա կրոնական անհանդուրժողականության[37]։ «Իվանեի բռնած այս դիրքը հայ եկեղեցու հանդեպ, անշուշտ, մի մեծ սխալ էր, որովհետև նրա կրոնական անհամբերատարությունը դժգոհություն և պառակտում էր առաջացնում հայերի մեջ, որոնք վրացիների հետ միացած պետք է պաշտպաներին Հայաստանն ու Վրաստանը արտաքին ահեղ թշնամիներից»,— գիտում է ակադ. Հ. Մանանդյանը[38]։

---

35 «Վրաց ժամանակագրություն», էջ 77։ Ուշագրավ է, որ «Պատմութիւն վասն ազգին Նետողացի» վկայությամբ, «էր որդին մեծին Շալուէի առ սուլտանն ի վաղուց ժամանակաց» («Պատմութիւն վասն ազգին Նետողաց», էջ 14)։

36 «Վրաց ժամանակագրություն», էջ 80—81,

37 Կիրակոս Գանձակեցի, էջ 224, Վարդան, էջ 143, Միխայել Ասորի, էջ 527։

38 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 198։ Սկզբնաղբյուրների այս զգուշավոր գնահատությանը հակառակ, Շ. Մեսխիան, մեջբերելով և զարգացնելով Վ. Հարությունովայի այն միտքը, թե XII—XIII դդ. «Հայկական ազնվականության ներկայացուցիչները, ընդունելով քաղկեդոնականություն, ոչ միայն դադարում էին նովանովորել ազգային եկեղեցուն, այլև հաճախ խլում էին նրանից տաճարներն ու վանքերը՝ դարձնելով դրանք քաղկեդոնական» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 3, էջ 90), Իվանե աթաբեկին «հայոց հավատին և եկեղեցուն բացահայտ պայքար» հայտարարող ու քաղկեդոնական ֆանատիկոս է ներկայացնում (Შ. მესხია, საშინაო პოლიტიკური ვითარება და ხამოხელეო წყობა XII საუკუნის საქართველოში, თბ., 1979, გვ. 257—258)։ Այսպիսով, մոռացության է տրվում այն հանգամանքը, որ Հայաստանում գործող հայ քաղկեդոնականների համար ամենևին էլ խորթ չէր ազգային զգացումը և նրանց՝ հայ մշակույթի հարստացմանն ուղղված գործունեությունը մասամբ ընթանում էր հենց երկրանակներին հանձնված վանքերում, ինչը փայլուն երևում է հենց Սիմեոն

Կարելի է ենթադրել, որ Իվանեի՝ կռվի մեջ չմտնելու որոշման վրա ազդեցին նաև հայկական զորամասերի դժգոհ տրամադրություններն այն իմաստով, որ աթաբեկը հույս չէր դնում մարտի մեջ մտնելու նրանց պատրաստակամության վրա։ Այս տեսանկյունից, թերևս, պատահական չպետք է համարել այն փաստը, որ առանց մարտի մեջ մտնելու Սյունիք վերադարձավ Լիպարիտ Օրբելյանն իր զորամասով[39]։

Ցավոք, աղբյուրները հնարավորություն չեն ընձեռում պարզելու, թե Գառնիում Իվանեի բռնած դիրքորոշման վրա ինչ չափով էին ազդել Ռուսուդան թագուհու հետ նրա հարաբերությունները։ Իբն ալ-Ասիրը, պատմելով Ռուսուդանի կողմից նորանոր ամուսնությունների հարց արծարծելիս այդ մտադրությունների հանդեպ թշնամական դիրքի մասին, առաջին հերթին հիշատակում է Իվանեին[40]։ Այդ լարված հարաբերությունները թագուհու և աթաբեկի միջև արդյո՞ք հետք չթողեցին Իվանեի ճակատագրական որոշման վրա։

Այսպիսով, Գառնիի պարտության պատճառների շարքում վճռական դեր պետք է հատկացնել ոչ թե զուտ ռազմական գործոններին, այլ, ամենից առաջ, ներքին անհամերաշխությանն ու տարաձայնություններին, որոնք էլ

Պղնձահանեցու օրինակից, խաչ է քաշվում հայ քաղկեդոնականների պատկառազդու մշակութային վաստակի վրա (П. М. Мурадян, Культурная деятельность армян-халкедонитов в XI—XIII веках (II Международный симпозиум по армянскому искусству), Ереван, 1978)։ Ինչ վերաբերում է կոնկրետ Իվանե աթաբեկին, ապա եթե Շ. Մեսխիային ինչ-որ կերպ ներելի է երկարնակ Իվանեի կողմից միաբնակ Հաղարծնի և Մորո Զորո վանքերը վերանորոգելու («Դիվան հայ վիմագրության», հ. VI, Երևան, 1977, էջ 22—24, 135—138) փաստերին անտեղյակ լինելը, ապա նա իրեն քաջածանոթ Կիրակոս Գանձակեցու Պատմությունից պարտավոր էր գիտենալ, որ հենց Իվանեն՝ տեղի և այնուհետև մյուս հայ իշխանների հետ միասին միջոցներ տրամադրեց Մխիթար Գոշին՝ Նոր Գետիկի վանքը կառուցելիս (Կիրակոս Գանձակեցի, էջ 210, 216)։ Հենց նույն Գոշը Զաքարեի հետ միասին Իվանեին էր դիմում՝ իրեն հուզող խնդիրներում երկուսի օգնությունն էլ հայցելով («Արարատ», 1900, էջ 497)։ Ազգային եկեղեցուց ամենևին էլ կտրված չէին նաև մյուս երկարնակ հայ իշխանները։ Այսպես, Սադուն Մահկանաբերդցին և Ավագ աթաբեկի դուստր Խոշաքը մասնակցում էին հայոց եկեղեցու համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ արծարծող Զագավանի 1270 թ. ժողովին (Գ. Հովսեփյան, Զագավանից ժողովը, «Շողակաթ», էջմիածին, 1913, էջ 23—27)։ Նույն Սադունը համարվում էր «տէր Հաղբատայ՝ մեծ և հռչակաւոր սրբոյ ուխտին» («Պատմութիւն վասն ազգին Նետողաց», էջ 28)։ Այս առումով չափազանց ուշագրավ է հատկապես Մխարգրձել Զաքարյանի և նրա կին Վանենի արձանագրությունը Սանահինում. «Էկի վանքս ու զտեղս անմարդ գտաք, որ ի մուհալաց եւ առաջնորդէ եւ այլ հարկէ աւէրած էր եւ էկեղեցիքս փակած։ Եւ զայս խուտրս տեսամ, մանու չափ տրտմեցամ, յաւագ զատկին զվ(ար)դ(ապետ)երն ի քաջ ին արարել եւ այլ շատ նախատինք։ Եւ արգ, ես, ամիրսպասալար Մխարգրձելս եւ թագաւորազն ամուսին իմ Վանենի.. մեր պապերէ զմեզ արձանս փոռեցամ եւ զեկեղեցիքս ամեն ճարկէ ազատեցամ...» (Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 125)։ Ավելացնենք, որ Շ. Մեսխիան հաճախ միակողմանի է ներկայացնում նաև մյուս Զաքարյանների բարդ դավանական քաղաքականությունը՝ անտեսելով հարուստ և հավաստի հայկական վիմագրական նյութը և, ընդհակառակը, լիովին հավատ ընծայելով այս հարցում գույները խառնող Կիրակոս Գանձակեցուն և Վարդան Արևելցուն։

39 Ստեփանոս Օրբելյան, էջ 399։

40 Ибн ал-Асир, с. 151.

որոշեցին ճակատամարտի ելքը՝ ծանր կորուստներ պատճառելով հայ-վրացական բանակին[41]։

Սկզբնաղբյուրները ճակատամարտը միաբերան թվագրելով 1225-ով, փոքր-ինչ տարբեր են նշում ամիսը։ Իբն ալ-Ասիրը ճակատամարտը դնում է հիջրայի 622 թ. շաբան ամսին[42] (1225 թ. օգոստոսի 8—սեպտեմբերի 5), սակայն ան-Նասավին այն ավելի վաղ ժամանակով է թվագրում։ Ըստ նրա, Ջալալ ադ-Դինը Դվինից Թավրիզ է մեկնել հիջրայի 622 թ. ռաջաբ ամսին[43] (1225 թ. հուլիսի 9—օգոստոսի 7), հետևաբար մինչև այդ իրադարձությունը տեղի ունեցած Գառնիի ճակատամարտը, համաձայն խորեզմշահի կենսագրի հաղորդումների, ընկնում է հուլիսին կամ օգոստոսի սկզբին։ Այս ժամանակագրական տվյալները գայթակղեցուցիչ եզրակացություն են հուշում՝ ճակատամարտը թվագրել ռաջաբի և շաբանի սահմանագծային օրերով՝ օգոստոսի 7—8-ով, սակայն Իբն ալ-Ասիրի հստակ ցուցումները հարկադրում են մերժել նման վարկածը։ Պատմիչի տեղեկությունների համաձայն, Ջալալ ադ-Դինը Մարաղան գրավել է 1225 թ. հուլիսին, հիջրայի 622 թ. ռաջաբ ամսի 17-ին (1225 թ. հուլիսի 25)՝ տիրել Թավրիզին[44] և այնուհետև արշավել Հայաստան ու Վրաստան։ Այս հյուսկեն ժամանակագրությունը հաստատվում է Իկոնիայի սուլթան Ալա-ադ-Դին Քեյ-Կուրադին Ջալալ ադ-Դինի հղած ուղերձի տվյալներով, որի բնագիրը պահպանվել է Իբն Բիբիի աշխատությունում։ Այն գրվել է հիջրայի 622 թ. Ջումադ Բ ամսի վերջին[45] (1225 թ. հուլիսի սկզբը), որից հետո միայն պետք է տեղի ունենային հետագա իրադարձությունները։ Եթե 1225 թ. հուլիսի սկզբին Ջալալ ադ-Դինը դեռևս Մարաղայում էր, ապա միանգամայն աներևակայելի է, որ նա հասցներ, հենց ըստ ան-Նասավիի տեղեկությունների, Մարաղայից մեկնել Ուշան, այնուհետև 7-օրյա պաշարումից հետո գրավեր Թավրիզը և մինչև հուլիսի 9-ը ներխուժել Հայաստան ու բանակել Գառնիի մոտ[46]։ Թվում է, որ, այնուամենայնիվ, ան-Նասավիի տեղեկությունները նկատառելի են այն իմաստով, որ հուշում են ճակատամարտը թվագրել ոչ թե Իբն ալ-Ասիրի վկայած շաբան ամսվա վերջով, այսինքն՝ սեպտեմբերի առաջին օրերով, այլ օգոստոսով, ավելի հավանական է վերջին օրերով։

Այսպիսով, սկզբնաղբյուրների վերստին քննությունը հնարավորություն է ընձեռում ճշգրտել Գառնիի ճակատամարտի ժամանակը[47], մոտավոր ճշտու-

---

41 ան-Նասավին զոհվածների թիվը համարում է 4 հազար (ан-Насави, с. 158), իսկ Իբն ալ-Ասիրը այդ թիվը հասցնում է 20 հազարի (Ибн ал-Асир, с. 157):

42 Ибн ал-Асир, с. 156.

43 ан-Насави, с. 159.

44 Ибн ал-Асир, с. 155.

45 ан-Насави, с. 359, прим. 2.

46 Նույն տեղում, էջ 154—157։ Ջ. Բունիաթովը Թավրիզի գրավման մասին հաղորդումը (հիջրայի 622 թ.) կոնկրետացրել է՝ փակագծերում ավելացնելով «ռաջաբի 17» (նույն տեղում, էջ 156)։ Բնագրի մեջ, ըստ Իբն ալ-Ասիրի տեղեկությունների, նման հավելում մտցնելը սխալ և ավելորդ է, քանի որ երկու պատմիչների հաղորդումները ժամանակագրական առումով զգալիորեն տարբերվում են և դրանով արհեստական հակասություն է ստեղծվում ան-Նասավիի աշխատությունում։

47 Լ. Բաբայանը, վկայակոչելով Կիրակոս Գանձակեցու և Իբն ալ-Ասիրի տեղեկությունները, Գառնիի ճակատամարտը դնում է 1225 թ. սեպտեմբերի կեսերին (Լ. Բաբայան, նշվ-

թյամբ որոշել պատերազմող կողմերի ուժերի հարաբերությունը և, ամենակարևորը, կռվի սակավ ուշադրության արժանացած հանգամանքների քննությամբ այլ լուսաբանություն տալ հայ-վրացական բանակի պարտության հիմնական պատճառների հարցին։

К ИСТОРИИ ГАРНИЙСКОЙ БИТВЫ

АЙРАПЕТ МАРГАРЯН

Резюме

В политической истории Закавказья второго десятилетия XIII в. важное место занимают нашествия последнего хорезмшаха Джалал ад-Дина (1220—1231), в значительной степени ослабившие страны Закавказья в военно-политическом и экономическом отношении и оказавшие определенное влияние на ход социальных процессов.

В дальнейших успехах Джалал ад-Дина решающее значение имел победный исход Гарнийской битвы, происходившей между армяно-грузинской армией, возглавляемой атабеком Иванэ Захаридом, и хорезмийцами.

На основе сводного анализа армянских, грузинских и восточных источников удалось выяснить время сражения (последние дни августа 1225 г.), соотношение сил сражающихся сторон (60 тысяч воинов армии атабека Иванэ против несколько меньшей армии Джалал ад-Дина, укрепленной, однако, отрядами местных мусульманских владетелей и ополчением из туркменских племен), а также главные причины поражения армяно-грузинских войск (внутриклассовая борьба и противоречия между различными группировками феодалов).

աշխ., էջ 185, հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 604), սակայն առաջին պատմիչը որևէ ամիս չի նշում, իսկ երկրորդի վկայությունները, ինչպես տեսանք, նման թվագրման համար հիմք չեն կարող ծառայել։